Հաստատված է
«Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարան» պետական ոչ առևտրային
կազմակերպության գիտական խորհրդի
2022 թվականի հոկտեմբերի 13-ի N 2 - 3 որոշմամբ,
գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր
_____ Դ. Ռ. Գալոյան
13 հոկտեմբերի 2022 թ.

ԿԱՐԳ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԿՍՆԱԿ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՄԵՆԹՈՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ՀՊՏՀ) սկսնակ դասախոսների և ասպիրանտների համար մենթորների ընտրության, մենթորության կազմակերպման պայմաններն ու կարգը:
2. Սույն կարգի դրույթները տարածվում են ՀՊՏՀ ամբիոններում մենթորության գործընթացն իրականացնող պատասխանատուների և այն կառուցվածքային ստորաբաժանումների կամ անձանց վրա, որոնք զբաղվում են մենթորության գործընթացի կառավարմամբ:
3. Մենթորությունը բարձր որակավորում ունեցող, փորձառու դասախոսի աշխատանքն է սկսնակ դասախոսի կամ ասպիրանտի հետ, որը չունի բուհում դասավանդման աշխատանքային փորձ:

2. ՄԵՆԹՈՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Մենթորության նպատակն է օգնել և աջակցել ՀՊՏՀ սկսնակ դասախոսներին անհրաժեշտ մասնագիտական և մանկավարժական հմտությունների ձեռքբերման հարցում՝ դասավանդման և գիտական գործունեության մեջ ներգրավվելու համար:
5. Մենթորության հիմնական խնդիրներն են՝
   1) սկսնակ դասախոսների ադապտացումը, համալսարանի էթիկայի և ակադեմիական ազնվության կանոնների յուրացումը.
   2) սկսնակ դասախոսներին օգնության տրամադրումը՝ դասավանդման մեթոդաբանությունը յուրացնելու հարցում.
   3) սկսնակ դասավանդողի մասնագիտական մակարդակի բարձրացումը.
   4) ընտրված աշխատանքի նկատմամբ մոտիվացիայի բարձրացումը:

3. ՄԵՆԹՈՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

6. Մենթորն ընտրվում է բարձր որակավորում ունեցող դասախոսներից՝ ամբիոնի առաջարկությամբ:
7. Մենթորի թեկնածությունն առաջադրում է համապատասխան ամբիոնը և ներկայացնում ռեկտորի հրամանագրմանը:
8. Մենթորությունն իրականացվում է սկսնակ դասախոսների նկատմամբ մեկ տարվա ընթացքում՝ սկսած նրա աշխատանքի անցնելու պահից:
9. Ամբիոնի մեկ մենթորին կցվում է չորսից ոչ ավելի սկսնակ դասախոս (կախված ամբիոնում սկսնակ դասախոսների թվից):
10. Սկսնակ դասախոսը կցվում է այլ մենթորի, եթե տվյալ մենթորի հետ լուծվում է աշխատանքային պայմանագիրը կամ մենթորի և սկսնակ դասախոսի միջև

առկա է աշխատանքային անհամատեղելիություն՝ մենթորի կամ սկսնակ դասախոսի դիմումի հիման վրա:

11. Մենթորության իրականացման նպատակով յուրաքանչյուր ուսումնական տարում կազմվում է աշխատանքային պլան, ըստ որի մենթոր դասախոսը պետք է աշխատի իրեն կցված սկսնակ դասախոսի(ների) հետ:
12. Սկսնակ դասախոսների հետ աշխատանքի արդյունքները ներկայացվում են ամբիոնի նիստին և ամփոփվում են ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից:
13. Որպես մենթոր ընտրվում են առավել մասնագիտացած, բարձր որակավորում և գիտական կոչում ունեցող դասախոսները, որոնք ունեն հաղորդակցման հմտություններ, դասավանդման և մեթոդական աշխատանքի առնվազն 5 տարվա փորձ:
14. Մենթորը նշանակվում է մենթորի և սկսնակ դասախոսի փոխադարձ համաձայնությամբ:
15. Մենթորությունը կազմակերպվում է բակալավրիատում դասավանդող՝
    1) նոր ընդունված դասախոսների համար, որոնք չունեն մանկավարժական գործունեություն իրականացնելու աշխատանքային փորձ, անկախ տարիքից.
    2) ասպիրանտների համար:
16. Մենթորի տարեկան բեռնվածության մեջ յուրաքանչյուր սկսնակ դասախոսի համար հատկացվում է 25 արտալսարանային ժամ:

4. ՄԵՆԹՈՐԻ ԵՎ ՍԿՍՆԱԿ ԴԱՍԱԽՈՍԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

17. Մենթորի պարտականություններն են՝
    1) սկսնակ դասախոսներին ծանոթացնել ՀՊՏՀ ակադեմիական կազմի գիտամանկավարժական գործունեությանը, դասընթացների կազմակերպման և իրականացման առանձնահատկություններին.

2) ուղղորդել դասախոսի պաշտոնի անձնագրին, ՀՊՏՀ գործունեության կարգերին ու կրթական ծրագրերին ծանոթանալու գործում.
3) օգնել ուսուցման էլեկտրոնային հարթակներում նյութերի վերբեռնման, էլեկտրոնային մատյանների լրացման, ուսումնական գործընթացին վերաբերող փաստաթղթերի կազմման հարցերում.
4) մեթոդական օգնություն ցուցաբերել դասախոսությունների նախապատրաստման, դիտողական նյութերի ընտրման և այլ հարցերում,
5) նպաստել նոր տեխնոլոգիաների ներդրմանը ուսումնական գործընթացում.
6) ծանոթացնել ուսանողակենտրոն կրթության իրականացման բազմաբնույթ բաղադրիչներին.
7) այցելել սկսնակ դասախոսի դասերին՝ նրա աշխատանքի վերլուծության համար.
8) ուղղորդել սկսնակ դասախոսին ինքնակրթման հարցում.
9) սկսնակ դասախոսներին տրամադրել խորհրդատվություն, վերահսկել և գնահատել նրանց ինքնուրույն աշխատանքը, տալ հստակ առաջադրանքներ որոշակի ժամանակահատվածում իրականացնելու համար.
10) բացահայտել և շտկել սկսնակ դասախոսի աշխատանքում առաջացած խնդիրները.
11) սկսնակ դասախոսի մոտ զարգացնել մանկավարժական և մասնագիտական կարողություններն ու հմտությունները:

18. Մենթորն իրավունք ունի՝
1) ամբիոնի համաձայնությամբ՝ սկսնակ դասախոսի պատրաստման համար ներգրավել ամբիոնի այլ մասնագետների՝ այլ կարողություններ և հմտություններ ձևավորելու նպատակով.
2) սկսնակ դասախոսից պահանջել աշխատանքային հաշվետվություններ բանավոր և գրավոր տեսքով.

3) առաջարկել ամբիոնին փոխել մենթորին:

19. Սկսնակ դասախոսի պարտականություններն են՝

1) ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության ոլորտը կանոնակարգող օրենքները, կարգերը, նորմատիվային փաստաթղթերը.

2) ծանոթանալ դասախոսի պաշտոնի անձնագրին և ՀՊՏՀ գործունեությունը կարգավորող կարգերին.

3) սահմանված ժամկետներում կատարել մենթորի կողմից տրված առաջադրանքները.

4) անընդհատ աշխատել մասնագիտական ունակությունների բարձրացման ուղղությամբ.

5) յուրացնել դասավանդման առաջավոր մեթոդները և ձևերը:

20. Սկսնակ դասախոսն իրավունք ունի՝

1) համալսարանի ղեկավար կազմին ներկայացնել առաջարկություններ մենթորության աշխատանքներում բարեփոխումներ մտցնելու նպատակով.

2) առաջարկել ամբիոնին փոխել մենթորին:

5. ՄԵՆԹՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

21. Մենթորի աշխատանքը վերահսկում է համապատասխան ամբիոնի վարիչը, ֆակուլտետի դեկանը և ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը:

22. Մենթորության աշխատանքի կազմակերպումը և անմիջական վերահսկումը իրականացնում է տվյալ ամբիոնի վարիչը:

23. Մենթորության գործընթացը պարբերաբար քննարկվում է ամբիոնի նիստում: